համամասնորեն:

Հայցվոր ընկերության կողմից ներկայացված հայցապահանջով վճարվել է պետական տուրքի գումարը:

Նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման, ուստի պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-194 հոդվածներով, դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲ ընկերության՝ 05.09.2024թվականին «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների մատակարարման թիվ ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-19 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելն անվավեր ճանաչելու, «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 16.09.2024թ. «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Նարեկ Մանուկյանի կողմից ընդունված որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժել;

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Նաիրա Ավետիսյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am